

ԻՐԱՎՈՒՆԿ

ԻՐԱՎՈՒՆԿ ԲԱՐՆԱ (ԲՅՈՒԼՆԻԿ) ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՓՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Յուլիանոյ համար Տարեկան 12 փր.
» Վեցամսեայ 6 փր.
Առաստանական համար (Երկու քիւրակեկ համարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 փր.
Ամերիկայի » 2.60 տոյ վեցամս 1.50
ԿԱՆՈՒԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եւայլն դրկել հետեւեալ հասցեով
ИПРАВУННИКЪ «ИРОВОУННИКЪ» ԿՐԱՎՈՒՆԿ — ՎՍԻՆԱ (Պալկարիա)
Редакция на ВѢСТНИКЪ
„И р а в у н н и к ъ“
ВАРНА (България)
Rédaction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Խնայարարութեամբ ուղղեալ գրութիւնք
ես չեն դրկուիր եւ յարմար դատարան-
ները միայն կը հրատարակուին աւ-
րաղջովին կամ մասամբ:
Պատկանական սոյր 20 ամսով. երե-
ւեմ աւելի անգամներու համար 20 0/0
գնել կը լինի:

ՀՐԱՏԱՐԱԿԱՆՆԵՐ

Ներքեւ եպիսկ. Ասրնեանի ոտ-
քը վանէն դուրս նետելուն հետեւ
եալ օրը սկսաւ հրաժարականնե-
րու տարաք մը տեղով Պատրիար-
քարան: Մշոյ, Կարնոյ, Շապին
գաւազահարի, Երիզայի, Էնկիւ-
րիի, Սղերգի, Քղիի և դիւ ու-
րի մի քանի տեղերու Առաջնորդ
և Տեղապահ հայրերը, կարծես ա-
մեն խօսք մէկ րոտ, փութա-
ցած են իրենց հրաժարականները
դրկել: Այս հրաժարող վարդապետ
ներուն գաւառային պաշտօններէ
փախուստին իրական տատառումը ոչ
անձնական տկարութեան մէջ պէտք
է փնտռել, և ոչ ալ պաշտական փա-
խուկէ կեանքէ մը ապրելու բաղ-
ձաքին: որովհետեւ այդ հրաժա-
րողները, մեծ մասամբ երիտա-
սարգ և խանդավառ վերադարձու-
նեք, առաջին հրաժարումը յօժարակամ
տեղին ինքզինքներն հովուական տա-
պաւրդի մէջ, բեղմնաւոր և արդիւ-
նաւոր գործունէութիւն մը ունեւե-
րով: բայց իրենց ամեն քայլը խո-
չնդանալուն հանգիստեցաւ կառա-
վարութեան կողմէ սարքաւած, ա-
տենց յաղթելու համար իրենց ար-
տուղիները, բողոքները ու տեղե-
կագիրները անյախի և ապարդիւն
մնացին: Պոյսոյ Ազգ. կեդրոնա-
կան վարչութիւնը Օսմանեանի նը-
ման ազդեցութեամբ մը իր
զուլը ունենալով, չի կրցաւ գա-
ւառացւոյ ոչ մի թախանձանքին
գոհացում տալ: Օրմանեան իր թույլ
և մեղկ քաղաքականութեամբ մի-
այն ու միայն ազգային իրաւասու-
թիւնները զոհել գիտցաւ, ի փո-
խարէն ոչ մի բարիք ձեռք կր-
նալ ձգելու:

Աւերող է հոս մէկ բերել Օր-
մանեանի ձեռքով մեր կորուսած
ազգային իրաւունքներու երկար
շարքը, քանի որ դիւ նոր է եւ
մեր ընթերցողներուն ծանօթ:

Ինչ կրնային ընել գաւառներու
Առաջ. Տեղապահ հայրերը քանի
որ իրենց Ազգային, տեղական
կառավարիչները, չեն թույլ տա-
ր իրենց փակուած վարժարանները
վերաբանալ առանց մասնաւոր ար-

տօնութեան զոր ձեռք իբրեւոյ
հաւար Պատրիարքարանի ազգե-
ցութիւնը պէտք է: Ինչ կրնային
ընել անոնք առաջնորդութեան շը-
ջապատող հազարաւոր ազգատե-
րուն, երբ կառավարութիւնը չի
թողտարեր անոնց ինպատ հան-
դանակութեան ձեռնարկելու եւ
նոյն իսկ նպատակներ բաշխելու:

Ինչ կրնային ընել այդ տեղա-
պահ հայրերը այն հարիւրաւոր
կողմաւորութեամբ, կեղծութեամբ ու վի-
րաւորութեամբ հայրութեան, երբ իրենց
«թաղերի»-ը ու բողոքը «միտէր
ալիք» կրկնայ:

Ինչ կրնային ընել վերջապէս
անոնք, երբ կեդրոնական կառա-
վարութեան կողմէ վերջին հար-
ուած մըն ալ իրենց կռնակին կի-
նար, անոնցմէ իրեւով այն միակ
իրաւունքը, որով կը բազմէին գա-
ւառական «խտարէ»ի ժողովին մէջ:

Այսպէս ամեն իրաւասութիւն,
ամեն ձեռնհասութիւն և ազգեցու-
թիւն կորսնցուցած Առաջ. Տեղա-
պահները բնական է որ չը պիտի
ուզէին պաշտօնի գլուխ մնալ, փա-
կուելով Առաջնորդարաններու եւ
վանքերու մէջ, որոնց պատահա-
նորուն ու դրան առջեւ խոնարած
որդերուն, մերկ ուրիշներուն, ազ-
գատներուն, նոր վերադարձուն-
նուն լայքը, կոծը ու թախանձան-
քը ամեն օր սրտերնէն կը մորմո-
քէ, բայց ոչ մի օգնութիւն, ոչ
մի ձեռնառութիւն ընելու անկա-
րող են: ճիշդ այն անգէն ու ան-
գիտատեւած հովիտին նման: որուն
աչքին առջեւ իր հօտը գայլերէ
կը գիշատուի:

Ուստի բնական է որ այսօրինակ
քստմեղի պաշտօնէ մը խոյս տան
ամեն խղճահար պաշտօնեաներ,
գոնէ ողբերգական արարուածին
պաշտօնական հանդիսատեսը չը-
լու համար: Այս բնագոյն դէմ
բացառութիւն մը չէին կրնար
կազմել մեր երիտասարդ արմաշա-
կան հայրերը, որոնք վերջապէս
իրենց վաղեմի ասուցիչն, Օրմա-
նեանի ազդեցութիւնը երեսին
զարնելու համար, արտուղիներէ
ու սրտամորմոք տեղեկագիրներէ
վերջ, կուգան աւել իրենց հրաժա-
րական: Օրմանեանի համար այս

նոր գաւ մըն է եթէ նա կրնայ
անոր նշանակութիւնը ըմբռնել:

Օրմանեան պէտք է այլ ևս հա-
մարձաւ ըլլայ թէ Սուլթանի հա-
կաւայ քաղաքականութեան հան-
գէտ որչափ ալ զիջողութիւն եւ
քծնում ցոյց տայ, փոխադարձ
հիւլէի մը չտի բարիք կարելի չէ
ձեռք բերել: Ահա այս ճշմարտու-
թեան նորագոյն մէկ ապացոյցը:
դեռ երէկ Ավագեան Յովսէփ եւ
պիսկոպոս իր հետը առնելով խա-
ռն ժողովոյ մէջ ինպատ դրան
զոհեց ազգին մէկ գարաւոր իրա-
ւունքը, կիլիկիոյ կաթողիկոսա-
կան ընտրելեաց ցոնկը կառավա-
րութեան սրտագրութեանը ենթար-
կելով: բայց այս ահագին զոհ-
ողութեան փոխարէն իր յուսացած
ամենաչինքն մէկ գործը, Ավագ-
եանի Եղիպտոս երթալու արտ-
նութեան խնդրը, դիւ չի կրցաւ
կարգադրել:

Անցեալ օր Աման Պիշկարի
Պոլսէն ընդունած մէկ հեռագիրը
մեզ փոքր ինչ յոյս ներշնչեց թէ
Պատրիարքը այլ ևս զգացած ըլ-
լայ իր յուսախաբութիւնը թուրք
կառավարութեան ցած մեքենայու-
թեանց առջեւ: քանի որ համար-
ձակէր էր վիրջապէս Մեծ Եպար-
քոսին խիստ դիմում մը ընել, կա-
ռավարութեան պաշտօնէից գոր-
ծած անիրաւութեանց դէմ բողո-
քելով և միանգամայն Պատրիար-
քարանը գողցելու կամ դեպքանաց
դիմելու սպառնալիք ցոյց տալով:

Օրմանեան եթէ իրօք այս քա-
ջութիւնը ունեցաւ, պէտք է հաս-
տատ մնայ իր այս նոր գիրքին
միայ, համարելով թէ թուրքը ա-
ղաչանքէ, շողորդութենէ չի հաս-
կնար, քծնողին կոկորդը ու աւե-
լի կը սեղմէ: պէտք է անոր դէմ
սպառնալիք և ի հարկին կռիւ:
Եթէ Օրմանեան ունի այս աւել-
րը, պէտք է շարունակէ իր այդ
նոր սպառնական գիրքը: յայնժամ
կրնայ վստահ ըլլալ թէ բոլոր Հա-
յութիւնը և Եւրոպայի համակրու-
թիւնը իր հետն են:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Խաղաղութեան Տիեզերական Հա-
մաժողովը Բարիզի մէջ իր չոր-
րորդ նիստը կատարեց: Սրահին
ունկնդիրներու յատկացուած մէկ
կողմը իստանբուլի չափ Հայեր կը նը-
մարուէին, որոնք եկած էին ի-
րենց վաղեմուն համակրութիւնը
յայտնելու այն ատենաբաններուն
որոնք Հայաստանի նկատմամբ օ-
րակարգին առաջարկներ պիտի
ներկայացնէին:

Նախ Պ. Ժան տը Պլօք ելաւ ու
«մեծ պիտութեանց միջեւ պատե-
րազմ ծագելու անկարելիութիւնը»
փաստեց և առաջարկութիւններ ու
բանաձեւեր ներկայացուց համաժո-
ղովին: Անոր յաջորդեցին Պ. Միշէլ
Պոէալ, Պ. Ֆրէտէրիք Բասի և
Մարքիզ տը Մարքոսթիւ, որոնց
նկատումներն ու առաջարկութիւն-
ները առաւել կամ նուազ ոգեւո-
րութեամբ ընդունուեցան:

Ասոնցմէ վերջ Պ. Նովիքովի
դարձաւ ումիտուն ու շաղկապութիւնը
բոլոր ներկայք խորութեամբ մը
պատրաստուեցան լսել Պ. Նովի-
քովի խօսքերը Հայաստանի մա-
սին: Ատենախօսին ներկայացու-
ցած տեղեկութիւնները ընդհանուր
սարսուռ ազդեցին ներկաներուն,
և անոր հետեւեալ առաջարկութիւն-
ներ խորին լուրջութեան մէջ ունկն-
դուեցաւ:

«Խաղաղութեան Տիեզերական
իննիրորդ Համաժողովը՝ Պ. Պ.
Կամպոլոֆի, Թաւաթուքի, Սապ-
րօլէվսքի, Լա Ֆոնթէնի, տը Ռօ-
պէրթի, Նովիքովի, Լը Ֆրանէ-
յի, Աքսաֆալեանի, Մէլիքովի և
ուրիշներու ներկայացուցած Հա-
յաստանի տեղեկագիրներէն ծանօ-
թութիւն առնելէ վերջ, կարծիք կը
յայտնէ թէ Հայոց կոտորածները
վերջին ժամանակներուս ամենա-
զարշելի գործերէն մին են, եւ
Համաժողովը իր համակրութիւնը
կը յայտնէ այս դժբաղդ ազգին
ու կը փափաքէ որ թուրք կառա-
վարութիւնը պարտաւորեցնեն յար

թիւին մէջ Անգլիոյ բնակիչները որոշեցին իրենց խնայողական քաղաքականութիւնը պահպանելու, որովհետեւ իրենց համար ինչպէս որ անհրաժեշտ է, իրենց հարկերը պարտաւարկաբար վճարելու համար, ինչպէս նաեւ պարտաւարկաբար իրենց կենսագործունէութեան առթիւ ծախսելու փոխարէն իրենց ծախսերը ցոյց տալու :

Երբեք ալ Գերմանիոյ իր թերթերը չեն ցոյց տուած որ անոնք իրենց հարկերը պարտաւարկաբար վճարելու համար, ինչպէս որ անհրաժեշտ է, իրենց հարկերը պարտաւարկաբար վճարելու համար, ինչպէս նաեւ պարտաւարկաբար իրենց կենսագործունէութեան առթիւ ծախսելու փոխարէն իրենց ծախսերը ցոյց տալու :

Ահա այսպիսի փոփոխութիւնները որոշեցին իրենց հարկերը պարտաւարկաբար վճարելու համար, ինչպէս որ անհրաժեշտ է, իրենց հարկերը պարտաւարկաբար վճարելու համար, ինչպէս նաեւ պարտաւարկաբար իրենց կենսագործունէութեան առթիւ ծախսելու փոխարէն իրենց ծախսերը ցոյց տալու :

Տ. Մ. Է.

ԱՁԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցիկալ ուրբաթ օրուան Պոլսոյ խառն ժողովոյ կրօնական անգամը իրենց միասին երեք շաբաթ իրենց խորհուրդով, կարեւոր խնդիրներու մասին որոշումներ չեն տրուած : Բայց ուրբաթ օրուան պարագայ մըն է որ կրօնական ժողովոյ դերը Ատենայնա Մանկունի Սրբազան գիրք մը կուզէ ժողովին, որուն մէջ կը յայտնէ իր յօ-

դաշտէ տառապելուն համար ժողովոյ նիստին ներկայ չի կրնար գտնուիլ, և տեսակ մը կ'ազարարէ որ ունի ինքզինքը մտածելու փոքրիկ կամ սրտով չը տրուի, վասն զի ինքն ալ իր ժողովական կողմէ իր կարծիքը յայտնել :

Գեր. Մանկունի Եպիսկոպոսի այս ազդարարութիւնը ապացոյց մըն է թէ բնաւ վստահութիւն չունի Պատրիարքին ու Գաղ. ժողովոյ անդամներուն : Ինչպէս գիտենք, խառն ժողովոյ, գումարաւորներուն մէջ միշտ Մանկունի և Բովհաննիսեան Սրբազանները եղած են ազգային իրաւանց պաշտպան և աշխատանք անդամներուն ձգտումները շարժող : Եւ այս պատճառաւ ալ շատերու աչքին փառք կրեան այդ երկու Ս. Հայրերը :

— Մուշի կարոյ՝ Շապին Գա. բաճակարի տեղապահները և Եր. զայի Առաջնորդը իրենց հրաժար. կանոնները Պատրիարքարան դրեալ են : Բայց խառն ժողովը մերժեց ընդունիլ : Ընկերակի տառ. տեղապահն ալ հիւանդութեան պատճառաւ հրաժարած լինելով, անոր հրաժարականը միայն ընդունուեցաւ :

— Մշոյ Տեղ. Բարգէն վարդապետի մէջ ընդարձակ տեղակայութիւն ժողովին ընդ երկու խորհրդաւ ծախսերուն տարակտայ եղաւ :

— Սեբեդի Տեղապահ Տ. Գասէն վ. և Քրիստի Տեղապահ Տ. Վահրի վ. հրաժարած էին իրենց պաշտօններէն : Խառն ժողովը այս երկուքին պաշտօնները փոխանակել որոշեց :

— Պոլսէ չի ազգային կրկին հանրագործութիւն մը պատրաստելով կը խնդրեն Գաղաքապետութեան ներքին արդի թաղ. խորհուրդը լուծէ : Այդ թաղականները 16 տարիէ ի վեր անընդհատ պաշտօն կը վարեն : Բայց իրենց պաշտօնավարութեան դէմ տրուելիքը շատ ցած ըլլալով՝ դատի ենթարկուած են : Կիսմանք նաեւ թէ Պոլսէ չի մէջ նոր ազգատախտակ մը կազմուած է :

— Ֆիլիպէյն մեզ կը գրեն թէ, Պարսից Շահը Պոլսէն վերադարձին ամեն ազգի խառն բազմութեան մը կայարանը դիմաւորուեցաւ : Գիմաւորներու առաջին կարգը գրաւուած էր Պարսկահայատակներէ : որոնցմէ մին Արամ Թաւր. Եանց Շահին Պոլիս երթալու առիթը պատկեր մը նուիրած ըլլալով, անկողնութեան ընդունուած էր : այս անգամ ալ Շահը հաճեց է յիշեալ ազգայիններն ոսկի Մէտալ մը նուիրել :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

— ԾԱՆՐԱՉՈՓ —

Խիստ մաքուր և թափանցիկ չի չի մը մէջ 60 կաւալ ալքոլ լիցնելու և յետոյ երկու կրամ ամոնիակ ալ ու երկու կաւալ ալ քափուր (քեա. ֆիր) ալ լցնելով փերջը շիշը լաւ մը ցնցելով խցել :

Այս հեղուկը եթէ վճիտ երեւոյթ մը առնէ նշան է թէ օդը պարզ պիտի ըլլայ, երբ փոքրիկ փոփուրներ տեսնուին անձրեւ պիտի գայ : Իսկ հեղուկը բոլորովին պղտորած առնել փոփուրի կապաւոր :

— Ֆրանսական բանակին մէջ փորձեր կը ընեն իբրեւ պահակ գործածելու : Գերմանիոյ մէջ այս փորձը լաւագոյն է : Այդ շունները այնպէս մը կը մարզուին որ լրտեսութիւնը բաց և կամ թշնամիին մօտենալը հասկնան և համար միայն ցած ձայնով կը մուտան : Իսկ հետո՛ւ Գերմանիոյ կը մտածեն ալ ահիկ նպաստաւոր միջոց մը ձեռք բերել այն է փոխանակ մուտաւոր փափուր մը ընել տալ :

Անցեալ տարի Գերման բանակին մէջ 16 շուններ առնուած են որոնք զօրանոցներու մէջ կը բնակին : Այս 19 շներէն 5 զատարակ շներ են 4 զատարակ իսկ մնացածներն ալ որսի շներն են :

— Վատիկանի գանձարանէն 357,000 ֆրանքի գողութիւն մը եղած է : Պահապաններէն ոմանց վրայ կաս-

կած կայ եղեր թէ գողութեան մասնակից ըլլան :

Պապութեան գրամարկը վատի կանի իրկորդը յարկը հաստատուած է եղեր, և պահապանութեան հոգն ալ յանձնուած Պապական գոյքերու վարչութեան, որուն պաշտօնն է միանգամայն հոգալ ու Պետրոսի կառքերը, ձիերը և չամեն ինչ որ պէտք է վատիկանի կեանքին և ճոխութեանը համար : Գողութեան նէն հասկնալով է որ կանխամտածութեամբ գործուած է ոճիրը և թէ գողերը գրամարկին տեղը գտնելու համար դժուարութիւն չեն քաշած :

Միացեալ Նահանգներու Ալապամա նահանգին Էլիքթիկ քաղաքին մէջ բնակ սեւամորթ մը սպիտակամորթ կնոջ մը վրայ կը յարձակի զայն բռնաբարելու համար : Արդարութիւնը ձեռք կը դնէ այդ յանդուգն յանցաւորին վրայ սակայն ժողովուրդը առանց սպասելու որ դատաւորները գործերին տեսնեն, մարդը կը բռնեն փայտակոյտի մը վրայ կը հանեն և քարիկներ կրակ տալով կայրեն :

— Վերջիս Ֆիլիպիններու Մա նիլա քաղաքին մէջ մեռած է Դոմի նիկեան կրօնաւոր մը խոր ծերութեան մէջ : Հասարակութիւնը խնդրած էր այս կրօնաւորէն Ֆիլիպ. եան ժողովրդին բարքին և բնաւորութեան վրայ ապարաւորութիւնները գրել : Դոմինիկեանը հաւանեցաւ բայց այն պայմանաւ որ իր մահէն վերջը բացուի իր ձեռք գիրքը և ուզածին պէտ ալ եղաւ : Սակայն 900 թերթերէ բաղկացեալ ձեռնակ թուղթէ զատ բան մը չը գտնուեցաւ այդ գիրքին մէջ, ուրուն վերջին էջին վրայ սա գրուած է եղեր : « Եւ այն որ գիտեմ ֆիլիպեան ժողովուրդին վրայ 40 տարիներու ուսումնասիրութիւնէ վերջը » :

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՂՆԵՐ [22]

(ՊԱՏԿԵՐ ՍԵ ՏԱԿԱՆԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ)

ԻԴ.

Գաւառի Փաշայէն Ետի Գուլէ մէկ ու կէս ժամու ժամ հետաւորութիւն մը կայ : Գաւառի կառքին մէջ մտնողներ իր հիւանդ հօրեղբոր քով նստած է, անոր ամուսնու գլուխը՝ իր քրոջ հակած : Կրտսերներէն թաւալել հիւանդակի կառքի անիւները : Խանի բոլոր « Գաւառիներ » խանէն զորս եկած, Շահին ողջ վերադարձ կը մարտնչէ սրտագին :

Կառապանը միջոցի կը քշէ իր ձիերը, հիւանդին համար իր շրջապատը համար : Ազատ Գաւառի կամուրջէն, Ուն գաւառէն, Պոլսոյ ճիւղին ելլելով, Ազատ Գաւառի ու Ճաւուտ Փաշայէն անցնելով, Եւ տի-Գուլէի հակա, ու ամրակուսողներէն զորս, Ազատ Գաւառի հիւանդանոցի գուռը կը հասնին :

Փրկելու մեծ պարտէզը, ուր Երբեմն տ'յնքան խանդով ու եռանդով կը տօնուէր Ազգ. Մահմանաւորութեան տարեգարծը, իր նորաբողոք վարդերու ու ծաղիկներու եւ հողատու ծառերու գեղանկարով՝ կը պարզուէ ճիւղաւորներէն մեծ զորան հանդէպ, որ իր բնական ու արուեստական հիւանդի երեւոյթով, բոլորովին հակադրութիւնն է Հիւանդանոցի ներքին վիճակին : Հօրեղբայր Շահէնը՝ Գաւառի եւ կառապանի օգնութիւնով, վար կ'իջնէ կառքին : Վարդերն մը իր կարօտալից աչքերը կը յարկէ այդ գեղեցիկ պարտէզի շուրջը, ու իր հիւանդ մարմնով վա-

երեւակայութեամբ՝ իր մարմնը կը նկարուէ շայրենի հողէն ու ջուրէն կարօտալից պատկերներ : Այդ հոգեկան բազմապատկէ վարդիտը իր տխուր եւ տանջող վիշտը կը բազմապատկէ, ու կ'անցնի փոքրիկ հիւանդի մը պէս, թաց աչքով՝ ոտք կը դնէ Հիւանդանոցին սեղնէն ներս, վերջին հրաժեշտ տալով կեանքին ու իր բոլոր միասնաւորներուն : Այնքան կոշտ ու անմարդկավարի էին Փրկելու այդ մեծ գրան ողորմելի գոնապանները, որքան տխրեցողից այն քոտական վիճակը՝ որ կը տիրէր Ազգ. այդ մեծ հասարակութեան ներքը : Այս տխուր խորհրդածութիւնները՝ դժբաղդաւոր այնպիսի իրողութեանց վրայ հաստատուած են որոց արձագանքը Ազգային անշահախնդիր Մամուլը կրկնած է ու կը կրկնէ տակաւին :

Այդ ծակ աչք ողորմելի դանապանները, փայտապէս Գուրգէնի ու իր հիւանդ հօրեղբոր զիմացը ցցուելով, կարգիլին անոնց ներս մտնելը, երբ « ձեռք մակ մէջ » կը տեսնեն, ոսկոր նկատող գամբուներու նման՝ պոչերուն վրայ նայելով, տեղերնին կը նստին : Եւստով կուգայ ներքին Տնօրէն Զաքարէֆէնտին : Ջախտ սուրապանաւորի մ'առաջնորդութիւնով, կը խրկէ գանձը հիւանդներու այն մեծ սրահն, ուր յիսուեցն աւելի խեղճ զարկա հիւանդներ կային պառկած արդէն :

Տխուր, շատ տխուր էր՝ Պոլսոյ Ազգային Հիւանդանոցի այս բաժնի նկարագիրը : Եւ ինչ որ Բրա-

րեւոյթ մը չ'ունէին : Անտէր ու անտիրական զարկա Հայերը, զանազան հիւանդութեանց երթակայ կը դիմէին Ազգային այդ տունը : Բայց եւտի-Գուլէի այդ տխրեցողից հաստատութիւնը՝ փոխանակ իր ներքին բարեկարգութեան ու կանոնաւորութեան անուշութիւնով այդ տառապեալներու ու զրկումներու ցաւերը ամբողջովն ու գիւրջեան սպիտակ զնեղու անոնց խոր վէտքերու վրայ, ընդհակառակը, ա'յնքան դանդիկ ու այնքան զգրելի էր այդ յարկի միջոցաւորը, (այն ու ներքին պաշտօնեաներու իրենց գործին բոլորովին ա' զիտակից ու անարժան ըլլալուն), որ դժբախտ հիւանդներ իսկայն կ'ըզը ջային շարժարանաց տունը եկած ըլլալուն համար :

ՀԱՅԱՐԱՍ Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

(Շարունակելի)



